2004, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (175)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Ամեն տարի՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնից հիսուն, իսկ Համբարձման տոնից տասը օր հետո, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես Տիրոջ փրկագործության ամբողջացում՝ ամփոփված տերունի տոներից մյուս չորսի (Հայտնություն, Տյառնընդառաջ, Հարություն, Համբարձում) խորհուրդներում եւ որպես Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու հիմնարկեք, տոնում է Հոգեգալուստը:

Ինչպես ավանդում են մեզ ավետարանիչները, հարություն առնելուց հետո Հիսուս Քրիստոս մի քանի անգամ հայտնվեց Իր աշակերտներին՝ ուսուցանելով ու բացատրելով նրանց Աստծո Արքայության եւ ապագա Եկեղեցու խորհուրդները: Քառասուներորդ օրը Նա նորից հայտնվեց աշակերտներին եւ այս անգամ տարավ նրանց Ձիթենյաց լեռ՝ վերջին անգամ անցնելով Երուսաղեմի փողոցներով, ծանոթ արահետներով ու վայրերով, որոնք եղան Իր ուսուցումների, փրկչական չարչարանքների, նվաստացումների եւ վերջապես՝ անմահիճ մահվան տառապանքների լուռ վկան: Սակայն այս ամենի խոսուն վկաները աշակերտներն էին, նրանք, ովքեր այդ ընթացքում ապրեցին վախի, կասկածի, հուսահատության դառը եւ հավատի վերանորոգության քաղցր ու ապրեցնող պահեր: Եվ ահա ժամանակն էր, որ նրանք տեսնեին նաեւ Ուսուցչի Աստվածային կատարյալ Փառքը:



Ձիթենյաց լեռը, անշուշտ, պատահականորեն չէր ընտրել Տերը. այս բարձունքի վրա, դեռեւս մինչ Աստվածորդու մարդեղացումը, շատ անցքեր էին տեղի ունեցել (տես՝ Բ Թագ. ԺԵ 30, Գ Թագ. ԺԱ 5-7, Դ Թագ. ԻԳ 13, Եզեկ. ԺԱ 23, Զաք. ԺԴ 4): Ավետարանիչների վկայությամբ՝ հաղթականորեն Երուսաղեմ մտնելիս Հիսուս այս լեռան ստորոտով անցավ (Ղուկ. ԺԹ 29, 37, Մատթ. ԻԱ 1-11, Հովհ. ԺԲ 12-19), տեսավ իր վշտերի քաղաքը եւ ողբաց նրան (Ղուկ. ԺԹ 41-44): Տերը նաեւ հաճախ էր գիշերները բարձրանում այստեղ եւ մինչ լույս աղոթում (Ղուկ. ԻԱ 37), եւ վերջին՝ դառնության գավաթն ըմպելու Նրա աղոթքին եւս ականջալուր եղան այս լեռան հարավային լանջին գտնվող Գեթսեմանի այգու ծանոթ ձիթենիները:

Աշակերտներին այս լեռը տանելով՝ Տերը նրանց մեկ անգամ եւս վկայեց, որ Իր տառապանքներից մինչեւ փառավորումը փրկչական մեկ համակարգ է, մեկ ոսկե համաձույլ շղթա՝ մարդկանց համար մշակված Աստծուց, որպեսզի մեղքի պատճառով ընկածներս հնարավորություն ստանանք երկինք բարձրանալու:

Փրկիչը դիմեց նրանց. «Բայց այժմ ես գնում եմ ինձ ուղարկողի մոտ, եւ ձեզանից ոչ ոք ինձ չի հարցնում, թե՝ ո՞ւր ես գնում... Բայց ես ճշմարիտն եմ ասում ձեզ. լավ է ձեզ համար, որ ես գնամ. որովհետեւ, եթե ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա, իսկ եթե գնամ, նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ. ԺԶ 5-8): Դժվար չէ պատկերացնել, թե ինչ զգացումներ պիտի ունենային աշակերտները՝ այս խոսքերը լսելով: Իրադարձությունների ու զգացումների արագընթաց հաջորդականությունն ասես հասել էր իր ցանկալի նպատակին, եւ Ուսուցչի մահն ու հարությունն ապրած աշակերտները, երբ մեկընդմիշտ եւ նորոգված հավատով գտել էին Նրան եւ այն էլ արդեն աներկբայորեն որպես Աստծո Միածին Որդու, հնչած խոսքերը տարակուսանքի նոր ոստայններ էին հյուսում... Երեք տարուց ավելի նրանք Տիրոջ կողքին էին, վայելում էին Նրա մարմնավոր ներկայությունը, շրջում Նրա հետ քաղաքներով ու գյուղերով, լսում Նրա քարոզներն ու սուրբգրային բացատրությունները, ընկղմվում Նրա առակների տեքստերում ու ենթատեքստերում, դառնում Նրա հրաշքների ու գործերի մշտական ականատեսը, Նրա հետ կիսում հացն ու ջուրը, տկարության, տառապանքների պահերին կրկին ուժավորվում Նրանից, բայց ահա Նա լքում է իրենց: Իսկ Ո՞վ է Մխիթարիչը, որ պիտի գա ու փոխարինի Փրկչին...

Եթե միայն ավետարանիչները փորձեին թղթին հանձնել շփոթահար աշակերտների ապրածն ու վերապրածը:

Հիրավի, Ուսուցչի խոսքերը զգաստացնող էին, տիրող մթնոլորտը՝ ծանր: Եվ սակայն բաժանման մտքի հոգեցունց ակնթարթը տեղի տվեց, նահանջեց...

Տիրոջ ժամանակին հնչեցրած խոսքերը, որոնք շատ հաճախ անհասկանալի կամ ոչ դյուրամարս էին, վերաիմաստավորվեցին: Մոռացված պատկերները կենդանություն առան եւ նրանց մի պահ տեղափոխեցին Տիբերիայի ծովեզերք: Հարուցյալ Ուսուցչի՝ հերթական անգամ աշակերտներին հայտնվելուց անցել էր ընդամենը մի քանի օր: Նրանք, ասես, մոռացած Ուսուցչի հետ անցկացրած իրենց կյանքի բազմահագ տարիները, կրկին զբաղված էին ձկնորսությամբ, երբ վերստին հայտնվեց Նա եւ դիմեց Պետրոսին՝ նախկին՝ «ավազակի» անվամբ. «Սիմո՛ն, որդի՛ Հովնանի, սիրո՞ւմ ես ինձ»,- հարցի մեջ ավելի շատ հանդիմանություն կար, քան պատասխանի ակնկալիք: Երեք անգամ հարցը կրկնելուց եւ համապատասխանաբար Պետրոսի պատասխանը լսելուց հետո ավելացրեց. «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին» եւ ապա՝ «Եվ ահա ես ձեզ ուղարկում եմ իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչեւ որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. ԻԴ 49): Ակնարկն այլեւս պարզ էր: Տերը խոսում էր Իր ապագա Եկեղեցու՝ երկրի վրա Իր Տան, Իր հոտի մասին, որին հետագայում Սուրբ Հոգու շնորհներով զգեցած աշակերտները պետք է հովվություն անեին: Բայց ինչպե՞ս: Նրանք իրենց ուժեղ ու զորավոր էին զգում միայն Ուսուցչի կողքին, Նրա ամենօրյա ներկայությամբ, սակայն, երբ Նա հեռանում է, ո՞ւմ պիտի ապավինեին: «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում եւ երկրի վրա. ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում:

*Շարունակությունը՝ էջ 2*

### ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ավարտվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա



Հունիսի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով պաշտոնական այցը Ֆինլանդիա, վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Հայրապետական պատվիրակությունը Ֆինլանդիա էր մեկնել Ավետարանական Լյութերական եկեղեցու պետ, Ֆինլանդիայի եւ Տուրկուի արքեպիսկոպոս Ջուկա Պաարմայի հրավերով:

Արքեպիսկոպոս Ջուկա Պաարմայի, ինչպես եւ Ֆինլանդիայի Ուղղափառ եկեղեցու պետ արքեպիսկոպոս Լեոյի հետ հանդիպումների ընթացքում եկեղեցապետերը հաստատել են միջեկեղեցական կապերի կարեւորությունը: Վեհափառ Հայրապետը հույս է հայտնել, որ համագործակցությունը կշարունակվի ոչ միայն հոգեւոր պետերի, այլեւ եկեղեցապատկան հաստատությունների միջեւ:

Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունեցել նաեւ Ֆինլանդիայի վարչապետ Մատտի Վանհանենի հետ: Գարեգին Բ Կաթողիկոսն անդրադարձել է դարասկզբին հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությանը եւ իր ափսոսանքն է հայտնել, որ տակավին կան պետություններ, որոնք պաշտոնապես չեն դատապարտել հայոց ցեղասպանությունը, որ մարդկության դեմ գործված մեծագույն ոճրագործություններից մեկն էր:

Հնգօրյա ուղեւորության ընթացքում Հայ Եկեղեցու պատվիրակությունն այցելել է նաեւ Ֆինլանդիայի Աստվածաշնչային ընկերություն, հանդիպել է Հելսինկիի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի տնօրինության հետ, ծանոթացել ֆակուլտետի գիտական կենտրոններում տարվող աշխատանքներին: Հայրապետին եւ նրան ուղեկից պատվիրակությանը հյուրընկալել են նաեւ ֆիննական երկու եկեղեցիների բարեսիրական կազմակերպությունները:

Վեհափառ Հայրապետը հանդիպել եւ իր օրհնությունն է բաշխել նաեւ ֆինլանդաբնակ սակավաթիվ հայորդիներին:

Այցի ավարտին Տուրկուի եկեղեցում երկու եկեղեցիների պետերը համատեղ աղոթք են բարձրացրել խաղաղության, ժողովուրդների բարեկամության, երկու հանրապետությունների համագործակցության, առաջընթացի եւ բարեկեցիկ կյանքի համար:

Ֆինլանդիա այցի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, գավազանակիր Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը: Նորին Սրբության ուղեկիցների թվում էր նաեւ Դանիայում, Ֆինլանդիայում եւ Նորվեգիայում ՀՀ դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը:

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ - 90

# ԴԵՊԻ ՄԱՐԴԸ

*Սկիզբը՝ էջ 4*

Կանգնած այդ պահը կարծես կյանքի հավիտենությունն է, իսկ շարժումը անընդհատ նորոգում է մահվան զգացողությունը.

*Դադարեք, վայրկյաններ, տարիներ, դադարեք,*
*Ժամանակ, դադարիր հոսելուց,*
*Ինչ տարաք հերիք է, ինձ նորից մի տարեք,*
*Յոգնել եմ ես մահից խոսելուց:*

Մետաֆիզիկականի զգացողությունը եւս պահի տեւողություն ունի, որովհետեւ ինքնախաբկանք է: Եվ վերստին գալիս է ճշմարտության անխուսափելի պահը.

*Հավերժ է մահը՝ կյանքի հանդիման,*
*Բայց, ահա, սիրտ իմ, պիտի ծիծաղես,*
*Ահա ցորենի մի հատիկն անգամ*
*Ծլում է նորից՝ ինչքան էլ թաղես:*
*Արցունքի տակի ծիծաղ ես, սակայն,*
*Ով ծիծաղ, թեկուզ հավերժ ծիծաղես...*

Կյանքի ու մահվան փիլիսոփայական հարցասիրությունը մեկ անգամ չէ, որ Շիրազին հասցնում է շեքսպիրյան մենախոսությունների: Եվ ծնվում է այսպիսի մի պատկեր.

*Կանցնեի անհոգ, երբ տեսա անփույթ,*
*Ոսկի արտի մեջ մարդկային մի գանգ,*
*Եվ այն գանգի մեջ տեսա մի արտույտ,*
*Որ թռավ... թողեց ձագերին մենակ:*
*- Օ՜, ողջույն,- ասի,- ով մարդ, օ՜, ողջույն,*
*Գանգդ անգամ դուռ է բացում հիացքի,*
*Եվ օրհնում եմ քեզ, ով ունայնություն,*
*Որ մահդ բույն ես դարձրել կյանքի...*

Կյանքի ու մահվան այս հավերժական շարժման մեջ, ի վերջո, Շիրազը եւս հանգում է հին ճշմարտությանը՝ «Գիրս մնա հիշատակող», որ նույնն է թե՝ «Գործն է անմահ». **«Նախնիներս իրար ասել՝ Նույն խոսքն ահա ինձ է հասել.- Ես մեռանիմ՝ դառնամ ի հող, Գիրս մնա հիշատակող: ... Թող իմանան դարերն ամեն Այս իմ երկսող Շիրազնամեն. - Ես մեռանիմ՝ դառնամ ի հող, Գիրս մնա հիշատակող»**:

Կյանքի ու մահվան առեղծվածի արծարծման շեքսպիրյան իմաստության հետ մեկտեղ Շիրազն իր մեջ համատեղում է նաեւ գյոթեական հետախույզ միտքը: «Ձեւսի ծաղիկը» պոեմը կարծես «Ֆաուստի» շիրազյան տարբերակը լինի: Նորից նույն հարցն է՝ ուղղված բնությանը եւ դրված աշխարհի գաղտնիքը քննող մտքի առջեւ. **«Բնությունն, իրավ, թե մայր է բարի, Ինչո՞ւ է սրում ժանիքը չարի... Կյանքի հետ ինչո՞ւ մահ էլ է ծնում, Անմահությունը ո՞ւր է թաքցնում»**: Արքայի բանաստեղծ որդին, թողնելով գահ ու գանձ, կին ու վայելք, փորձում է հասու լինել կյանքի, մահվան ու անմահության գաղտնիքին. **«Չեմ ուզում իշխել իմ նմաններին, Ուզում եմ մահվան կոկորդը բռնել... Ես երկրում կուզեմ անմեռ վերուստը,- Այսպես քրթմնջաց հայոց Ֆաուստը»**: Անընդմեջ նույն հարցումն է՝ **«Ինչո՞ւ են տեւում, այն էլ դարերով անասունն, հավքը, Այնինչ՝ մի պահ է հավերժության մեջ մարդկային կյանքը»**, եւ նույն պահանջը՝ ուղղված ամենակարող երկնային Տիրոջը. **«Անմահություն տուր իմ մարմնականին, Որ երկրում տեսնեմ, թե չարյացն հլու՝ Մարդկության գլխին էլ ի՞նչ է գալու...»**: Անմահության դերը, ըստ Շիրազի պոեմի տրամաբանության, դառնում է Ձեւսի ծաղիկը, ինչի որոնումն էլ ընկած է պոեմի հերոսի գործողությունների հիմքում: Անմահության տենչը նաեւ անհունի գաղտնիքը եւ «հյուլեի հյուլեն» ճանաչելու ցանկություն է: Իսկ արքայազնի **«Տուր ինձ գեթ հույսի բառբաբ մի կյանք»** խնդրանքին Աստված պատասխանում է. **«Թե անմահանաք՝ Առավել վայրագ պիտի հղփանաք, Ողջ ազգերդ իրար աչք էլ կհանեք, Պերճ տիեզերքն էլ պիտի կործանեք...»**: Այսինքն՝ անմահությունը կատարելության հասած մարդկային կյանքի նպատակ կարող է լինել եւ ոչ թե անկատար կյանքի պահանջ: Ուստի եւ անմահությունը դեռեւս անհասանելի է մարդկային ցեղին:



Կյանքի ու մահվան, գոյի ու անգոյի, շարժման ու փոփոխության փիլիսոփայական հարցերը Շիրազն արծարծել է ամբողջ ստեղծագործական կյանքում: Բազմաթիվ գործերի մեջ հիշատակելի են նաեւ «Օ, ծով խելահեղ...», «Ախ, ինչո՞ւ բացված...», «Ջրերը կերթան...», «Մահից դեպի կյանք...», «Թռչում են, թռչում...», »Այն օրից, երբ դու...» բանաստեղծությունները եւ շատ ու շատ քառյակներ: Այս բնույթի բանաստեղծություններում Շիրազի ուժը նրանում է, որ իրեն՝ որպես ստեղծագործող, նա համարում է աշխարհի շարժումը կարգավորող ոգի, իրեն՝ որպես ինքնօրինակ մի արարչի, հավասար իրավունքով դնում աշխարհի բախտը տնօրինող աստվածային ուժի դեմ:

Մարդու եւ մարդկայինի մասին Շիրազի փիլիսոփայական խորհրդածությունների մեջ կարեւոր տեղ ունի նաեւ անհատի, ընդհանրապես Աստծո ստեղծած ամեն մի արարածի ազատության հարցը: Ազատությունը այն առանձնահատուկ, բայց նաեւ միակ բնական վիճակն է, որ ընկած է Շիրազի թե խոսքի եւ թե բանաստեղծական նկարագրի հիմքում: Ազատությունը՝ որպես ստեղծագործական վիճակ, որպես ստեղծագործողի նկարագիր, որպես մարդկային կյանքի միակ երազանք, որպես հոգեւոր ճախրանքի սահման. **«Ինչն անհաս է՝ նա է թվում ամենագեղն ամենից,- Արծիվն ասավ՝ թեւերս առեք, երազներս տվեք ինձ»**: Մեկ այլ դեպքում նույն այս վիճակի զգացողությունը դառնում է այսպիսի պատկեր. **«Թռչունն ասաց՝ - Թեւերս առեք, ազատություն ինձ տվեք: ... Մարդն էլ ասաց՝ - Կյանքս առեք, Ազատություն ինձ տվեք»**: Այս բնույթի են նաեւ «Արծվի երազը», «Արծիվ լեռների...» բանաստեղծությունները: Եվ հենց արծվի, նաեւ առյուծի խորհրդանշաններն է, որ ազատության մասին խոսելիս սիրում էր օգտագործել Շիրազը: Գնալով նեղացող, փոքրացող մարդկային կյանքը վանդակում է մարդուն: Մարդը կորցնում է ոչ միայն արտաքին ազատությունը հասարակության մեջ եւ քաղաքակրթության օրենքների սահմաններում, այլեւ ներքին հոգեւոր ու մտավոր ազատությունը: Գիտության ստեղծած նոր սարքերի սարսափը կախվում է մարդկության գլխին, եւ տագնապալի է դառնում այն հայտնագործությունը, որի ստեղծած սարքը կարող է ի վիճակի լինել կարդալու մարդու միտքն ու հոգին: «21-րդ դարը...» բանաստեղծությունը, սկսելով այսպիսի տողերով. **«Կգա ժամանակ (վայ տեսնողներին), Մարդիկ կիմանան ինչ կմտածես, Կկարդան բոլոր մտքերդ մթին...»**, հասնում է այսպիսի բռնկուն ինքնապաշտպանության. **«Մի խոսքի արծիվ ազատությունս Չեմ փոխի հազար մեղրածովի հետ,- Իմ ազատ խոսքն է իմ հոգու սյունս, Ու ոչ թե հացի ծովը ցնծավետ»**:

Շիրազի մարդերգության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում **մորը նվիրված երգերը**: «Հուշարձան մայրիկիս» բնորոշումը, որով Շիրազը համախմբեց ու վերնագրեց իր այդ բնույթի բանաստեղծությունները, հուշարձան է մոր խորհրդանշական կերպարով բնութագրվող մարդկայնությանը: Շիրազը մոր կերպարը տեսնում է մարդկության հոգեւոր կերտվածքի տեսադաշտում: Մորը Շիրազը դարձրեց իր բնականոն հունից դուրս սայթաքող կյանքի դեմ ուղղված մի աստվածություն, որը մոլորյալ մարդկությանը պատգամում է կեցության անաղարտ բարոյականություն: Իսկ դա նշանակում է, որ մայրը վեր է ամեն ինչից եւ սուրբ. **«Միայն մայրն է մնացել սուրբ Արարատ... Աստվածները սատանաներ դուրս եկան... Ախ, լոկ մայրն է սուրբ ու վեհ»** («Նախերգ»):

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



# «ՍԵՒԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»

# ՀՐԱՇԱԳՈՐԾ ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 4*

Մատնության ու չարչարանքների թեման ներկայացնելուց հետո հորինվածքի ստորին մասը մեր հայացքը տանում է դեպի պատկերի կենտրոն եւ գամում Մանուկ Հիսուսի մեզ ուղղված աչքերին: Հիսուսի գրկին զոհաբերական մահվան խորհրդանիշ խաչափայտն է՝ չարչարանաց գագաթնակետը, ոտքերի տակ՝ երեւում արծաթը: Նրա հագին սպիտակ քիտոն է, որը տվյալ դեպքում նույնպես առնչվում է պատկերում արծարծվող խնդրին (տես՝ Ղուկ. ԻԲ 11): Մանուկ Հիսուսի հայացքը կարծես ասում է. «Ես եմ բարի հովիվը. բարի հովիվը իր կյանքն է տալիս ոչխարների համար» (Հովհ. Ժ 11):

Ավելի վեր Սուրբ Աստվածամայրն է: Նա պատկերված է կիսանդրի, աղոթական դիրքով: Հայացքն ուղղել է Որդուն: Վշտակիր դեմքն արտահայտում է նրա սրտի մաքրագործող տառապանքը: Որդու չարչարանքները նա կրում է սրտում: Այստեղ է բյուրեղանում պատկերի բուն ասելիքը:

Երկար տարիներ սրբապատկերը գտնվել է Սեւանի վանքում (որտեղից էլ ծագում է նրա անունը): Մասնագետները այն թվագրում են որպես ԺԷ դարի առաջին կեսի ստեղծագործություն: Մոտավոր ժամանակը որոշելուն օգնել է այն հանգամանքը, որ 1692 թվականին 16-ամյա Մխիթար Սեբաստացին՝ Մխիթարյան միաբանության ապագա հիմնադիրը, գտնվելով Սեւանի վանքում, տեսել է այդ սրբապատկերն ու աղոթել նրա առջեւ:

Այդ տարիներին պատանի Մխիթարը ծանր մտասանջության մեջ էր: Ուսումնատենչ սարկավագը ծարավի էր գիտության: Նա փնտրում էր իր կյանքի ճանապարհը, երազում գիտնական վարդապետների միաբանության մասին: Սակայն ժամանակի իրականությունը ոչ միայն հնարավորություն չէր տալիս կրթվելու եւ զարգանալու, այլեւ սառն անտարբերությամբ էր վերաբերվում այդ գաղափարին: Չկար նաեւ մի ուսյալ վարդապետ, որի մոտ կարելի լիներ աշակերտել: Մխիթարը աղոթում էր, խնդրում Աստծուն ողորմության դուռ բացել...

Ահա ինչ է գրում Մխիթար Սեբաստացու կենսագիրներից մեկը՝ Ստեփանոս Ագոնց արքեպիսկոպոսը. «...Այնչափ տառաժանմամբ եւ վշտակրութեամբ խնդրէր, հոգայր եւ տառապէր ի սրտի, եւ զգայ եւ զցերեկ արտասուալից հեծութ(եամ)բ ի ցաւագնեալ սրտէ աղաղակէր առ Ա(ստուա)ծ. Զի՞նչ լինիցի ինձ Տ(է)ր իմ. եւ կամ ես զի՞ արարից. զի եւ աստ ոչ հանդիպեցայ՝ որում փափաքի անձն իմ, արդ՝ ո՞ւր դիմեցից, եւ կամ յո՞ ապաւինեցայց ցուցանել ինձ ճանապարհ բարի, բաց ի Քէն Տ(է)ր իմ բարերար, որ լոյս ես խաւարելոց եւ առաջնորդ կենաց:

Եւ յաւուր միում մտեալ առանձինն յեկեղեցին, եւ անկե(ա)լ առաջի պատկերին Ա(ստուա)ծամօրն, կայր յաղօթս ցաւագին անձամբ, եւ արտասուօք պաղատանօք աղաչէր զմայրն ողորմութեան այցելու լինել ինքեան. եւ արտասուքն իբրեւ վտակս ջուրց հոսէին յաչաց նորա: Ապա զկնի երկար այսպիսի արտասուաթոր պաղատանաց, անկաւ թմբրութի(ւն) ի վերայ նորա: Եւ ահա երեւեցաւ նմա օրհնաբանեալ Կոյս Մարիամ Ա(ստուա)ծածինն յայտնի եւ պայծառ տեսլեամբ, զի կայր անդ դէմ յանդիման ի հանդերձս համակ ծաղկէնկարս. եւ առնովաւ երկու կուսանք իբրեւ սպասաւորք մեծի օգոստատիրուհւոյն: Եւ մինչդեռ ի զարմացման էր Մխիթար ընդ սխրալի տեսիլն, ազդ արարին նմա կուսանք՝ թէ նա ինքն է մեծ տիրուհին ամենաս(ուր)բ Ա(ստուա)ծամայրն. ը(նդ) որ հայեցեալ պատանւոյն, հրաշացաւ ընդ գերահրաշ գեղ նորա. եւ ի խորս խոնարհութե(ամբ) ընկղմեալ՝ եւ իբր ի չիք դարձե(ա)լ ի միտս իւր, լցաւ անպայման խնդութ(եամ)բ: Եւ ամենօրհնեալ կոյսն մխիթարեալ զնա եւ քաջալերեալ՝ ասէ. զինչ կամիս, եւ զինչ խնդրես. խնդրեա եւ տացի քեզ: Յայնժամ լուսով շնորհաց լուսաւորե(ա)լ պատանւոյն՝ զայն եւեթ խնդրեաց, որ քան զամենայն խնդրելիս լաւագոյն էր եւ պատշաճագոյն՝ ասելով: Ես ոչ գիտեմ տիրուհի, թէ զինչ իցէ ինձ կարեւոր եւ օգտակար, զի խնդրեցից. զայն կամիմ, զոր ինչ դու կամիս. եւ զայն խնդրեմ, զոր դու գիտես թէ ինձ պիտոյ է, եւ կամիս շնորհել: Ասէ ցնա Տիրամայրն. բարի է, կատարեցից քեզ զխնդրուածդ զայդ. եւ նոյնժամայն աներեւոյթ եղեւ տեսիլն: Եւ սթափեալ պատանւոյն, եգիտ զանձն քաջալերեալ եւ լի մխիթարութ(եամ)բ. եւ գոհացաւ ցնծութեամբ սրտի զՏ(եառ)նէ եւ զամենօրհնեալ կուսէն: Եւ այնուհետեւ բնաւ ոչ ջնջեցաւ ի մտաց նորա սքանչելի տեսիլ կերպարանացն. զայն ունէր ցանգ առաջի մտացն աչաց յամենայն յաղօթս իւր. եւ այն եղեւ մխիթարու(թ)ի(ւն) նմա յամենայն վիշտս եւ ի տառապանս, զոր կրեաց ընդ բովանդակ կեանս իւր...» («Պատմութիւն կենաց եւ վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ րաբունապետի եւ Աբբայի...», Վենետիկ, 1810, էջ 47-49):

Փաստորեն այս տեսիլքով Մխիթարը ստանում է աստվածային օրհնություն եւ օգնականություն՝ իրագործելու իր երազանքը: Տարիներ անց, բազում դժվարություններ հաղթահարելով, նա հիմնում է իր միաբանությունը եւ նվիրում այն Սուրբ Աստվածամորը: Ղեւոնդ Ալիշանի խոսքով. «... յաջողեցաւ նորին Տիրամօր շնորհօք հաստատել զկրօնս իւր (1700), շինելով վանս՝ նախ ի Մեթոն Մոռէայ, եւ ապա (1717) ի Վենետիկ, անուանելով զմիաբանսն Որդեգիրս Կուսին աստուածայնոյ, որում յանձն արար զնոսա» («Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի», Վենետիկ, 1893, էջ 88):

Սակայն ի՞նչն է այստեղ ուշագրավ. Մխիթար Սեբաստացին արժանանում է Սուրբ Աստվածամոր այցելությանը, երբ ծնրադիր աղոթում էր եկեղեցում՝ «Սեւանի Աստվածամայր» սրբապատկերի առջեւ: **Սա մի եզակի վկայություն է Հայ Եկեղեցուն պատկանող հրաշագործ սրբապատկերի մասին:**

Մեր եկեղեցին ունի մի շարք նվիրական սրբություններ, որոնք դարեր շարունակ հայ հավատացյալի համար եղել ու կան առանձնահատուկ մեծարանքի առարկա: Հատկապես նշանավոր են Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը, Խոտակերաց Սուրբ Նշանը, Սկեւռայի Մասնատուփը, Շուրիշկանի Ավետարանը եւ այլն: Այս սրբությունները հայտնի են նաեւ իրենց հրաշագործ զորությամբ՝ պայմանավորված եւ փոխկապակցված հավատացյալի անկեղծ հավատով եւ այդ օծյալ իրերի աստվածային ներգործությամբ: Այդպես է նաեւ հայոց սրբապատկերների պարագայում, որոնք մեր եկեղեցում, դեռ վաղ միջնադարից ընդունված կարգի համաձայն, օրհնվելուց եւ անվանակոչվելուց հետո օծվում են սրբազան Մյուռոնով:

Բնականաբար օծված է նաեւ «Սեւանի Աստվածամայրը», եւ ուստի որպես այդպիսին պետք է գտնվի օծյալ վայրում, օծյալ տաճարում, այն է՝ եկեղեցում: Այսինքն՝ անհրաժեշտ է ապահովել սրբապատկերի գործառույթն իրականացնող միջավայրը: Ասել կուզենք, որ արժե ժամանակին եկեղեցուց բռնագրավված սրբապատկերներն ընդհանրապես, իսկ այս դեպքում «Սեւանի Աստվածամայրը» մասնավորապես, վերադարձվեն հարազատ տուն: Կարծում ենք՝ վերոհիշյալ պատկերի տունդարձը կարող է լավագույնս նպաստել նրա կոչմանը՝ հրաշագործությանը: Նա պետք է վերադառնա, որպեսզի տարիների հարկադրական բաժանումից հետո վերստին հանդիպի Տիրոջն ապավինած հավատացյալին՝ բարեխոսելու, բժշկելու նրա հոգին ու մարմինը, օգնելու ալեկոծյալ հոգիներին, անտերկյուղ պահելու տարակուսյալներին, հաստատելու աստվածպաշտությունը:

*Ավետ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

